ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀԶՀ-ՊԸԾՁԲ-17/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «24» հունվարի 2017 թ.

2017թ-ի հունվարի 24-ին՝ ժամը 10:30-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ՀԶՀ-ՊԸԾՁԲ-17/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Արտակ	Պողոսյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի ծրագրերի կառավարման և ֆինանսատնտեսագիտական բաժնի ծրագրերի կառավարման պատասխանատու – բաժնի ղեկավար"
Լիլիթ	Գինոսյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի իրավաբան.
Անահիտ	Սարգսյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի ծրագրերի կառավարման և ֆինանսատնտեսագիտական բաժնի հաշվապահ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Տիրան	Լաճիկյանը	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի գլխավոր իրավաբան – բաժնի ղեկավար:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Արտակ Պողոսյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՋՀ-ՊԸԾՁԲ-17/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/, վերջինիս/ներիս/ կողմից ներկայացված հայտի/երի/ գնահատման և առաջարկված գնի/երի/ մասին:
2. Առաջին /և հաջորդաբար տեղեր/ զբաղեցրած մասնակից/ներ/ որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀՋՀ-ՊԸԾՁԲ-17/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ/ԵՐ/ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ/ԱՆՑ/, ՎԵՐՋԻՆԻՍ/ՆԵՐԻՍ/ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ/ԵՐԻ/ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ/ԵՐԻ/ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Արտակ Պողոսյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 3 000 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը հայտնեց, որ՝

- ՀՋՀ-ՊԸԾՁԲ-17/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք (այսուհետ՝ նաև մասնակիցները).

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«ԷՅ-ԷՆ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	ՀՀ, ք. Երևան, Գյուլբենկյան 30/3, 129 գրասենյակ
2.	«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ	ՀՀ, ք Երևան, Նալբանդյան 48/1, 5-րդ հարկ
3.	«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	Իրավ" հասցե՝ ՀՀ, ք Երևան, Նուբարաշեն 10փ, 6տ" ՏԳՀ՝ ՀՀ, ք" Երևան, Մյասնիկյան 5/1
4"	«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ	ՀՀ, ք" Երևան, Վաղարշյան 8/1

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցները հայտերը պարունակող ծրարները կազմել և ներկայացրել են ՀԶՀ-ՊԸԾՁԲ-17/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան.
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ «ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, որով ներկայացված պատճենների քանակը չի համապատասխանում հրավերով սահմանված քանակին"
- Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ-ի, որի կողմից ներկայացված տուժանքի մասին համաձայնագրումմ բացակայում են սույն ընկերության տնօրենի անձնագրային տվյալները, իսկ վճարման պահանջագրում՝ հայտի ապահովման գումարը պակաս է գնային առաջարկի 2 տոկոսից"
- Մասնակիցները ներկայացրել են հետևյալ գները՝ առանց ԱԱՀ.

Հ/հ	Մասնակցի անվանումը	Չափաբաժնի համարը և առաջարկած գինը/երը/՝ (ՀՀ դրամ)
		Չափաբաժին 1
1.	«ԷՅ-ԷՆ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	2,070,000
2.	«ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ	290,000
3.	«ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ	520,000
4.	«ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ՓԲԸ	3,000,000

Որոշվեց՝

1. Արտակ Պողոսյանի և Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. «ԷՅ-ԷՆ ԱՈՒԴԻՏ» և «ԱՍԱՏՐՅԱՆՍ» ընկերությունների կողմից ներկայացված հայտը/երը/ գնահատել բավարար:

3. «ԷՅՎԻՍԻ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ԸՆԴ ԱՈՒԴԻՏ» և «ԳՐԱՆԹ ԹՈՐՆԹՈՆ» ընկերությունների կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

2. ԱՌԱՋԻՆ /ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ/ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ/ՆԵՐ/ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետով՝

Որոշվեց՝

1. Որպես ՀԶՀ-ՊԸԾՁԲ-17/1 ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներ ճանաչել համապատասխանաբար «ԱՍԱՏՐՅԱՆՍ» և «ԷՅ-ԷՆ ԱՈՒԴԻՏ» ընկերություններին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 49-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի

քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 10:30-ին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Պողոսյան _____

Հանձնաժողովի անդամ՝

Լ. Գինոսյան _____

Ա. Սարգսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____